



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

*Մերի Խաչատրյան*

# Ճգնաժամերն ու ապատեղեկատվությունը. ապատեղեկատվության դեմ պայքարի կիրառական հնարքներ

Հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում:

Երևան, ապրիլ 2021

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում կազմակերպվել են դասընթացներ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների (մասնավորապես մարզային և տարածաշրջանային հասարակական ու երիտասարդական կազմակերպություններից), երիտասարդ վերլուծաբանների, ինչպես նաև ուսանողների համար: Դասընթացներում ներառված էին հետևյալ թեմաները.

- Հետազոտության դիզայն և մեթոդներ,
- Մեդիագրագիտություն. արշավ արդի լրատվական մանիպուլյացիաների դեմ,
- Արդյունավետ հաղորդակցության կազմակերպում ճգնաժամային պայմաններում,
- Ճգնաժամային իրավիճակներում սոցիալական ՁԼՄ-ներում ատելության խոսքի դրսևորումները:

Դասընթացների նպատակն էր նպաստել մասնակիցների կարողությունների զարգացմանը՝ հետագայում արդյունավետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և հասարակության լայն շերտերում մեդիագրագիտությունը խթանող նախաձեռնություններով հանդես գալու համար: Մասնակիցները նաև ունեցել են գործնական աշխատանք կատարելու հնարավորություն՝ դասընթացները վարած փորձագետների խորհրդատվությամբ նախապատրաստելով իրենց հոդվածները:

Ծրագրի մասնակիցների հրապարակումները չեն արտահայտում Քաղաքականության հետազոտական կենտրոնի, Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Վիկտորյա Մելքոնյան

*Մերի Խաչատրյանը մասնագիտությամբ տնտեսագետ-հաշվապահ է: Ավարտել է ԵՊՀ «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» բաժինը, այնուհետև «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրոսական ծրագիրը:*

*Հեղինակը շնորհակալություն է հայտնում դասընթացներ վարած բանախոսներին՝ կատարած աշխատանքի, մասնակիցներին ժամանակ հատկացնելու և գիտելիքներով ու փորձով կիսվելու համար: Առանձնահատուկ շնորհակալություն Դավիթ Ալավերդյանին՝ այս աշխատանքը նախապատրաստելիս տրված խորհուրդների, այնուհետև նաև այն գնահատելու համար:*

## **Ջգնաժամերն ու ապատեղեկատվությունը. ապատեղեկատվության դեմ պայքարի կիրառական հնարքներ**

Կեղծ տեղեկատվությունը մշտապես խնդրահարույց է եղել հասարակությունների համար: Այն որոշ չափով ազդում է մարդկանց՝ այդ թվում հոգեբանորեն և մասնագիտորեն պատրաստվածների, հոգեկան-հուզական աշխարհի վրա:

Ներկայումս նորագույն տեխնոլոգիաների և մասնավորապես սոցիալական ցանցերի շնորհիվ ապատեղեկատվությունն ամբողջությամբ մտել է մեր կյանք:

Արդի պայմաններում չափազանց դժվար է կեղծ ու ճիշտ տեղեկությունները տարբերել միմյանցից՝ չլինելով մասնագետ կամ չտիրապետելով հատուկ գործիքների, որոնք թույլ կտան կողմնորոշվել տեղեկատվության իսկությունը ստուգելու հարցում:

Ապատեղեկատվությունը ենթադրում է կեղծ, մանիպուլյատիվ, ժամկետանց ինֆորմացիայի տարածում: Այն կարող է թյուրըմբռնման տեղիք տալ և բացասական ազդել հանրային կարծիքի ձևավորման վրա:

Կեղծ լուրը դեղին լրագրության կամ քարոզչության մի տեսակ է, որը բաղկացած է կանխամտածված ապատեղեկատվությունից կամ կեղծիքներից, որոնք տարածվում են ավանդական մեդիայի՝ տպագիր և հեռարձակվող, կամ առցանց սոցիալական լրատվամիջոցների միջոցով:

Ստահող նորությունները գրվում և հրապարակվում են հասարակությանը մոլորեցնելու նպատակով:

Պակաս վտանգավոր չէ նաև «մանիպուլյատիվ տեղեկատվությունը», որը ենթադրում է տեղեկատվության խիստ սուբյեկտիվ կամ խեղաթյուրված ինտերպրետացիա կամ մեկնաբանություն:

Մանիպուլյացիան առերևույթ ճշմարիտ տեղեկատվությունն է՝ սխալ մեկնաբանության դիտավորությամբ: Ըստ «Ռեզիոն» հետազոտական կենտրոնի

ղեկավար, մեղիափորձագետ Լաուրա Բաղդասարյանի կարճ և դիպուկ բնորոշման, «համաշխարհային լրահոսի 65%-ը կամ կեղծ է, կամ մանիպուլյատիվ»:

Մտահոգիչ է, որ ապատեղեկատվության ազդեցությունը տարածվում է հասարակության բոլոր շերտերի վրա:

Մինչև անգամ արցախյան երկրորդ գոյամարտի ժամանակ մեր հասարակությունն առնչվեց պետական մակարդակով տրվող ոչ ստույգ, թերի տեղեկատվության, որն, ինչպես տեսանք, հետագայում հանգեցրեց խիստ հիասթափության և պետական ինստիտուտների նկատմամբ անվստահության:

Պատերազմի ավարտին մասնագետներն անդրադարձան այն խնդրին, որ պատերազմական իրավիճակում կեղծ/ճշմարիտ տեղեկատվությունը 30% / 70% հարաբերակցությամբ պետք է լիներ, մինչդեռ պատերազմի ողջ ընթացքը նշանավորվեց այս օրինաչափության արմատական խախտմամբ:

Զարմանալիորեն, առավել վտանգավոր է այն տեղեկատվությունը, որը կեղծ է ոչ ամբողջությամբ, որի բովանդակությունը կիսով չափ է խեղաթյուրված: Հետևաբար, առավել բարդ է տարբերակել վերջինիս՝ իրականության հետ համատեղելիության աստիճանը:

Շատ զանգվածային լրատվական միջոցներ աշխատում են հենց այս տրամաբանությամբ և ավելի շատ մոլորեցնում ընթերցողին, որից համեմատաբար ավելի շատ ժամանակ և ջանք է պահանջվում՝ տեղեկությունների հավաստիության մեջ համոզվելու հարցում:

Աղետալի հետևանքների կարող է հանգեցնել ապատեղեկատվությունը ճգնաժամային իրավիճակում, որում մեր երկիրը գտնվում է արդեն շուրջ մեկ տարի՝ սկզբում համավարակի, ապա նաև վատագույն ընթացքով և հետևանքներով ուղեկցվող պատերազմի արդյունքում:

Առհասարակ, այսօրվա իրականության պայմաններում չափից շատ տեղեկությունների հետ աշխատելը, կեղծն իրականից տարբերելը դարձել է բարդագույն խնդիր: Այնուամենայնիվ, կարող ենք հետևել անվտանգության մի քանի կանոնների, որոնք ինչ-որ չափով կօգնեն ճշգրտել տեղեկությունների իսկությունը:

✓ Նախ, ցանկացած պարագայում պետք է չկորցնել սառը դատելու ունակությունը, լինել օբյեկտիվ և չտրվել զգացմունքների ու սադրանքների: Իհարկե սա ևս մարտահրավեր է, սակայն, եթե ցանկանում ենք չընկնել ապատեղեկատվության ոլորապտույտի մեջ, սա նախապայման է:

✓ Հարկ է ընտրել որոշ վստահելի լրատվամիջոցներ և հետևեք նրանց նորություններին: Լրատվական դաշտ այժմ չափազանց հագեցած է: Միայն հայկական տիրույթում գործում են 200-ից ավել լրատվականներ: Բնականաբար, դժվար է կողմնորոշվել՝ որ մեկին վստահել: Նույն տեղեկատվությունը տարբեր կայքերում տարբեր կերպ է մատուցվում, և անգամ փորձառու ու տեղեկացված մարդու համար տարբերակելը ժամանակատար է: Ըստ մեղիափորձագետ Դավիթ

Ալավերդյանի խորհրդի, պետք է, հիմնվելով նախկինում ստացած տեղեկատվության վրա, ունենալ առավել վստահելի աղբյուր, և հատկապես ճգնաժամային իրավիճակներում, երբ չափից շատ են հակասությունները, որոշել, որ լրատվականին էք նախապատվություն տալիս ու առավել վստահում, և հետևել հիմնականում նրանց հրապարակումներին: Կարելի է, օրինակ, նախապատվություն տալ թվով հինգ վստահելի լրատվականների և հետևել վերջիններիս նորություններին: Պետք է նկատի ունենալ, որ որքան էլ լրատվամիջոցներն անաչառ ու պրոֆեսիոնալ աշխատեն, այնուամենայնիվ, նրանք ևս կարող են «սխալվել»: Դա բնավ առիթ չէ այլևս չօգտվելու նրանց լրատվությունից, մանավանդ այն դեպքում, երբ նրանք կարողանում են գիտակցել և ընդունել իրենց սխալը և հանդես գալ ապատեղեկատվության կամ կեղծ լրատվության հերքմամբ կամ շտկմամբ:

✓ Ամեն դեպքում, անգամ այս պարագայում երբեք պետք չէ հիմնվել մեկ կամ երկու աղբյուրներից ստացված տեղեկատվության վրա. պետք է ստուգել ձեզ համար կարևոր տեղեկություններն այլ կայքերից ևս, իսկ հնարավորության դեպքում՝ ստուգել սկզբնաղբյուրը: Իհարկե, սկզբնաղբյուրի ստուգումն ունի իրեն բնորոշ բարդություններ՝ հատկապես, երբ այն գուցե չի էլ նշվում: Մինչդեռ տարբեր կայքերով տեղեկությունների ստուգումն անհամեմատ ավելի հեշտ է: Խրախուսելի է լրատվության ստուգման համար մասնագիտական կարծիք հայցելը ևս: Ի վերջո, կան ոլորտային պատասխանատուներ ու փորձագետներ, որոնք առավել իրազեկ են ու պատրաստված, հետևապես, նաև պատրաստակամ՝ տալ մասնագիտական խորհուրդ-ուղղություն:

✓ Եթե որևէ անձի կամ կառույցի խոսք է մեջբերվում, ցանկալի է մտնել վերջինիս պաշտոնական էջ և հենց իր էջում ստուգել տվյալ տեղեկության առկայությունը և հավաստիությունը: Բացի այդ, հնարավոր է համոզվել նաև, թե տվյալ անձի պաշտոնական էջի հետ որևէ խնդիր չկա և չի ենթարկվել արդյոք կիրենհարձակման:

✓ Պետք չէ նաև շտապել կիսվել անհայտ աղբյուրից ստացված և դեռևս չճշտված տեղեկատվությամբ: Փորձելով մանրամասն ուսումնասիրելուց և հավաստիության մեջ համոզվելուց հետո միայն նյութերը տարածել սոցիալական կայքերում, հնարավոր է չդառնալ ապատեղեկատվության անուղղակի կրող և տարածող:

✓ Մեդիագրագիտության մակարդակը բարձրացնելու և առավել տեղեկացված լինելու համար հարկ է փորձել ժամանակ գտնել և մասնակցել դասընթացների՝ վեբինարների, վերապատրաստման կամ ոչ ֆորմալ կրթության այլ ձևաչափերի, որոնք ուղղված են մեդիագրագիտության և նորարարական թվային հմտությունների զարգացմանը:

Առավել հետաքրքրվածների համար կան նաև հատուկ ծրագրեր, որոնցով հնարավոր է ստուգել որևէ նկարի, վիդեոյի իսկությունը, սկզբնաղբյուրը, առաջին անգամ դրա համացանցում հայտնվելու ամսաթիվը և նմանատիպ այլ տեղեկություններ: Նույնը վերաբերվում է նաև տեքստային տեղեկատվությանը: Այս գործիքակազմով հիմնականում աշխատում են մասնագետները:

Այս համատեքստում բոլորիս հիշողությունում թարմ է պատերազմի ընթացքում Արցախի Հանրապետության նախագահի մամուլի խոսնակ Վահրամ Պողոսյանի ֆեյսբուքյան հայտնի գրառումը Շուշիի հետ կապված. «Շուշին ամբողջությամբ դուրս է մեր վերահսկողությունից...» (09.11.2020թ.), որը հանգեցրեց խուճապային տրամադրությունների և իր անդրադարձը գտավ բոլոր սոցկայքերում՝ կասկածի տակ դնելով դրա ճշմարտացիությունը և Վ. Պողոսյանի էջի կոտրված լինելու հավանականության մասին եզրահանգմամբ, քանի որ ոչ ոք չէր ցանկանում հավատալ, որ գրառման բովանդակությունն իրողություն է: Դրանում մեղքի մեծագույն բաժինն ունեին պատասխանատու պետական գերատեսչությունները՝ իրենց կողմից տրամադրվող չափազանց լավատեսական և ոչ ստույգ տեղեկատվության պատճառով: Ի վերջո, որոշ լրատվականներ կապ հաստատեցին Վ. Պողոսյանի հետ, և նա անձամբ փոխանցեց, որ գրառման հեղինակն ինքն է: Որոշ այլ լրատվականներ և անհատներ փորձեցին մեղիափորձագետ Սամվել Մարտիրոսյանից պարզաբանում ստանալ Պողոսյանի էջի հետ կապված, և մեծ էր հիասթափության ալիքը, երբ Ս. Մարտիրոսյանը հայտնեց, որ էջը չէր ենթարկվել հարձակման: Այնուամենայնիվ, այդքանից հետո ևս գտնվեցին մարդիկ, որոնք չցանկանալով հավատալ իրականությանը, կասկած հայտնեցին, որ գուցե Պողոսյանն անձամբ չէր կատարել գրառումը:

Պակաս վտանգավոր չէ նաև անհիմն ոգևորություն (հասարակական էյֆորիա) առաջացնող տեղեկատվությունը, որի հետևանքները գուցե ավելի ցավալի են: Այս համատեքստում կարելի է հիշել պատերազմի առաջին օրերին տարբեր անձանց կողմից և լրատվամիջոցներով շրջանառվող տեղեկատվությունը, որ իբր Շահումյանը վերցրել էինք, Գետաշենի մատույցներում էինք, ինչը պաշտոնապես չէր հաստատվում բայց և չէր հերքվում: Այնուամենայնիվ, ինչպես հետագայում տեսանք, լուրն իրականությանը չէր համապատասխանում, ինչը հասարակության շրջանում մեծ հիասթափության տեղիք տվեց:

Համավարակով պայմանավորված սահմանափակումներից շատ չանցած, սկսեց զանգվածաբար տարածվել այն թեզը, որ կորոնավիրուսի թեստ հանձնողները «չիպավորվում են»՝ ինչը, բնականաբար, մարդկանց ստվար զանգվածի մոտ ծիծաղ առաջացրեց, բայց ոչ զարմանալիորեն, եղան նաև այնպիսիք, ովքեր հավատացին այդ տեսությանը և բացասական տրամադրվեցին թեստ հանձնելու դեմ: Բնականաբար, դա չապացուցվեց, բայց մարդկանց գիտակցության մեջ այդ անհիմն պնդումն այլևս տեղ էր գտել: Նաև սրանով պայմանավորված, մարդիկ սկսեցին զանգվածաբար չպահպանել անվտանգության կանոնները, դեմ դուրս գալ պարետի ընդունած գրեթե բոլոր որոշումներին, կասկածի տակ դնել վիրուսի առկայությունն առհասարակ: Դա որոշակիորեն ևս վիրուսի ակտիվ տարածման առիթ հանդիսացավ:

Նկատենք, որ նման տեղեկությունների տարածումը պատահական չէր. այն կոնկրետ լրատվականների և ինչու ոչ, նաև միջազգային քաղաքական ուժերի ուղղորդված գործունեության արդյունք էր, որն իր առջև դրված նպատակին

հասավ՝ մեծապես ազդելով առողջապահության ոլորտի, հետևաբար նաև ողջ պետական ապարատի վրա:

Իսկ արդեն համավարակի ներկայիս փուլում, երբ խոսք է գնում պատվաստանյութի առկայության մասին, լրատվականների «թեթև ձեռքով» առաջ է քաշվել այն թեզը, որ պատվաստանյութերը պարունակում են կյանքի համար վտանգավոր տարրեր, որոնք ազդելու են պտղաբերության վրա և նպաստելու են ապագա սերունդների հիվանդացության կտրուկ աճին: Այսպիսի ասեկոսեներ նախկինում էլ են եղել՝ այլ պատվաստանյութերի վերաբերյալ:

Սույն հոդվածը բոլորովին վերոնշյալ անրադարձերը հերքելու կամ հաստատելու նպատակ չի հետապնդում. պարզապես ցանկացած տեղեկություն, որը մեզ մատուցվում է, շատ խորը հետազոտության կարիք ունի: Որևէ նորություն կարդալիս պետք է ուշադրություն դարձնել՝ արդյոք տվյալ լրատվամիջոցն անկախ է, կամ գուցե որևէ քաղաքական ուժի շահերն է ներկայացնում, և ինչ նպատակներ է հետապնդում:

Արժե վերհիշել, թե որքանով են վստահելի եղել մատուցված տեղեկությունները, և վերջապես, անձամբ հետամուտ լինել փաստերի ստուգմանն ու կատարվող պնդումների հիմնավորմանը՝ զգոն լինելով և քննադատաբար մոտենալով: